ՀՏԴ 929:902/904(479.25) Մելիքսեթ-Բեկ + 947.925

Doi:10.54503/0135-0536-2024.3-180

ԼԵՎՈՆ ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿԸ՝ ՎԻՇԱՊԱՔԱՐԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՂ*

ԱՐՍԵՆ ԲՈԲՈԽՅԱՆ

Բանալի բառեր՝ Լևոն Մելիքսեթ-Բեկ, հնագիտություն, Ջավախք, Թռեղք, մեգալիթյան մշակույթ, վիշապաքարեր, 1920-ական թվականների հետազոտություններ:

Նախաբան

Հայտնի կովկասագետ-հայագետ, ծագումով արցախցի[1] Լևոն Մելիքսեթ-Բեկը (1890 թ., Թիֆլիս – 1963 թ., Թիֆլիս) ավարտել է Օդեսայի համալսարանը (1913 թ.) և հիմնական գիտական իր գործունեությունը ծավալել Վրաստանում՝ լինելով Թիֆլիսի համալսարանի դասախոս (1918–1922 թթ.), դոցենտ (1922–1931 թթ.), պրոֆեսոր (1932–1963 թթ.), արևելյան լեզուների և գրականության (1930–1933 թթ.), Անդրկովկասի և Մերձավոր Արևելքի պատմության (1933–1935 թթ.) և Հայկական բանասիրության (1935–1963 թթ.) ամբիոնների վարիչ: Դասավանդել է նաև Երևանի պետական համալսարանում (1936–1940 թթ.): Իր ակտիվ գիտական գործունեության արդյունքում արժանացել է Վրացական ԽՍՀ գիտության վաստակավոր գործչի (1941 թ.) և Հայկական ԽՍՀ ԳԱ թղթակից անդամի (1945) պատվավոր կոչումների[2]:

Լ. Մելիքսեթ-Բեկը գիտական հանրությանը հայտնի է առավելապես որպես միջնադարագետ-աղբյուրագետ և թարգմանիչ: Ավելի քիչ է լուսաբանված գիտնականի գործունեությունը որպես ազգագրագետ[3] և հնագետ: Մինչդեռ

** Ներկայացվել է 15. VII. 2024 թ., գրախոսվել է 20. VII. 2024 թ., ընդունվել է տպագրության 21. XI. 2024 թ.: Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսական աջակցությամբ՝ 21AG–6A080 ծածկագրով գիտական թեմայի շրջանակում: Հոդվածի հիմքում ընկած է 2017–2018 թթ. ընթացքում վրաց գործընկերների հետ (Վրաստանի ազգային թանգարանի գիտաշխատող, պ. դ. թ. Դմիտրի Նարիմանիշվիլի) իրականացված դաշտային աշխատանքները, որոնց ընթացքում փորձել ենք անցնել Լ. Մելիքսեթ-Բեկի նկարագրած հուշարձաններով (կիկլոպյան ամրոցներ, աշտարակաձև կառույցներ, մենհիրներ և հատկապես՝ վիշապաքարեր) Ջավախքում և Թռեղքում՝ ստուգելով դրանց ներկա վիճակը:*

[1] 1956 թ. Լեռնային Ղարաբաղ կատարած հնագիտական ուղևորության հաշվետվության մեջ Լ. Մելիքսեթ-Բեկն Արցախն անվանում է «նախնիներիս օրրան» (Մ ե ի ք ս ե թ-Բ ե կ. 1957, 3):

[2] Կենսագրության և գործունեության մասին մանրամասն տե՛ս Меликсет-Беков. 1960; *Ղ ա ր ի բ յ ա ն. 1963, Մ ո ւ ր ա դ յ ա ն. 1963, Մ ո ւ ր ա դ յ ա ն. 1966, Մ ո ւ ր ա դ յ ա ն. 1990, Բ ա յ ր ա մ յ ա ն. 2013: Արխիվի մասին տե՛ս* Меликсет-Беков. 1987; *հմմտ. Բ ա յ ր ա մ յ ա ն. 2013, X:*

[3] 1915–1918 թթ. Մելիքսեթ-Բեկը եղել է Թիֆլիսի Հայոց ազգագրական ընկերության խմբագրական մասնաժողովի անդամ-քարտուղար, իսկ 1920-ական թվականներին ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի կովկասյան պատմահնագիտական ինստիտուտում (Թիֆլիս) աշխատել է ազգագրագետներ Գ. Զուրսինի և Ստ. Լիսիցյանի հետ,

Մելիքսեթ-Բեկը հատուկ հետաքրքրություն է ունեցել հնագիտության նկատմամբ Օդեսայում դեռևս համալսարանական տարիներին՝ 1909–1913 թթ., որտեղ հնագիտություն է սովորել Է. Ֆոն-Շտերնի մոտ[4]: Հուշարձաններ ուսումնասիրելու նպատակով ուսանողական տարիներին ճանապարհորդել է Ռուսաստանի հայաբնակ վայրերում (Ղրիմ, Խերսոն և այլն), Արմազիում կազմակերպել է «Հնագիտական հրապարակ»: 1914 թ. Մելիքսեթ-Բեկն ընտրվել է Օդեսայի Պատմական և հնագիտական ընկերության թղթակից անդամ, 1918 թ.՝ Մոսկովյան հնագիտական ընկերության Կովկասյան բաժանմունքի գիտական քարտուղար, իսկ 1922 թ.՝ նույն ընկերության նախագահ:

Հնագիտական ակտիվ գործունեությամբ Մելիքսեթ-Բեկը սկսում է զբաղվել խորհրդային շրջանում: 1921 թ. նա մասնակցում է Վրաստանի տարբեր հատվածներում (Կախեթ, Կավտուրի, հարավային Օսեթիա, Թռեղք, Ջավախք) իրականացվող հնագիտական աշխատանքներին, իսկ 1923–1930 թթ.՝ ղեկավարում Վրաստանի հնավայրերն ուսումնասիրող մի շարք արշավախմբեր՝ Թիֆլիսում գտնվող ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի կովկասյան պատմահնագիտական ինստիտուտի կազմում: Ավելի ուշ՝ 1956 թ., հնագիտական ուղևորություն է ձեռնարկում Լեռնային Ղարաբաղ, որի ընթացքում նկարագրում է հիմնականում միջնադարյան հուշարձաններ, սակայն հիշատակում է նաև ավելի վաղ թվագրվող Խոջալուի դամբարանները, Տիգրանակերտը և այլն[5]:

Պատմաբանասիրական մի շարք աշխատանքներում Մելիքսեթ-Բեկն անդրադառնում է միջնադարյան հայկական և վրացական հուշարձաններին (Մցխեթ, Գարեջի, Էջմիածին, Սևան և այլն), դրանց վիմագրերին, որոնցում, ի թիվս այլոց, քննարկում է նաև հնագիտական ոճի խնդիրներ[6]: Իր հրապարակումներում գիտնականն անդրադառնում է նաև Հայաստանի հնագիտական հետազոտությունների պատմությանը XIX դ.[7], ուրարտական արձանագրություններում հիշվող սրբավայրերին[8]:

Ջավախքի և Թռեղքի վիշապաքարերը

Որպես հնագետ Մելիքսեթ-Բեկը հանդես է գալիս ոչ թե պատմական, այլ նախապատմական հնագիտության բնագավառում, ինչն առաջին հայացքից պիտի որ չառնչվեր նրա գիտական հետաքրքրություններին: Մասնավորապես, գիտնականի հետազոտությունների թիրախ են դառնում մեգալիթյան հուշարձանները (ամրոցներ, բնակելի շենքեր, կանգուն քարեր և այլն) մասամբ Օսեթիայում[9], բայց հիմնականում՝ Ջավախքում և Թռեղքում[10]: Այդ հուշարձանների թվում կարևոր դեր էր վերապահված վիշապաքարերին:

հրատարակել ազգագրական մի շարք հետազոտություններ (Մ ե լ ի ք ս ե թ - Բ ե կ. 2010, 10, Բ ա յ ր ա մ յ ա ն. 2016, 8, հմմտ. Լ ա լ ա յ ա ն. 1983, 13, Ն ա հ ա պ ե տ յ ա ն. 2020, 198, 246, 253, 270–271, 273: Ե. Լալայանի և Լ. Մելիքսեթ-Բեկի համագործակցության մասին հմմտ. Ն ա հ ա պ ե տ յ ա ն. 2020, 198):

[4] *Մ ո ւ ր ա դ յ ա ն. 1966, 55:*

[5] *Մ ե ի ք ս ե թ - Բ ե կ. 1957, 3:*

[6] *Աշխատանքների ամբողջական ցանկը տե՛ս* М е л и к с е т - Б е к о в. 1960.

[7] М е л и к с е т - Б е к о в. 1947б, 45–50.

[8] *Մ ե ի ք ս ե թ - Բ ե կ. 1916, 43–44:*

[9] М е л и к с е т - Б е к о в. 1925а, 252–279; М е л и к с е т - Б е к о в. 1925б, 4; *հմմտ.* Д з а т т и а т ы. 2019, 33–36.

[10] М е л и к с е т - Б е к о в. 1938, 5–140; М е л и к с е т - Б е к о в. 1943, 149–164; М е л и к с е т - Б е к о в. 1947а, 27–37.

Վիշապաքարերը կենդանական պատկերագրությամբ օժտված հուշարձաններ են, որոնք կրում են բարձր մակարդակի խորհրդանշական ծանրաբեռնվածություն: Դրանք ունեն 150–550 սմ բարձրություն, պատրաստված են բազալտից կամ անդեզիտից և ըստ ձևի ու պատկերագրության բաժանվում են երեք տիպի՝ ցլակերպ, ձկնակերպ, ձկնացլակերպ: Կոթողները թվագրվում են Ք. ա. III հազ. երկրորդ կես – II հազ. վերջ, սակայն ակունքները գնում են ավելի վաղ ժամանակներ[11]:

Վիշապաքարերի տարածման կարևոր օջախներից են Ջավախքն ու Թռեղքը, որտեղ հայտնի են մոտ 39 օրինակներ[12]: Իրենց բազմաթիվ առանձնահատկություններով (ձև, պատկերագրություն, լանդշաֆտ) դրանք նմանվում են Հայկական լեռնաշխարհի այլ շրջաններից հայտնի կոթողներին, սակայն ունեն մի քանի առանձնահատկություն, որոնցից ամենակարևորները հետևյալն են. 1. ձևի տեսանկյունից դրանք ավելի ծավալուն են (հատկապես՝ ինչ վերաբերում է լայնությանը), 2. ի հայտ են գալիս միջին և ցածր գոտիներում (ծ. մ. մինչ մոտ 2000 մ բարձրության վրա, այսինքն՝ բարձր լեռնային վիշապաքարեր անհայտ են), 3. հիմնականում հայտնվում են եզակի և ոչ խմբով, 4. շատ հաճախ դամբանաթմբերի կամ կրոմլեխների մոտ / վրա կամ դրանց համատեքստում են:

Այս վիշապաքարերն ունեն մեկ այլ կարևոր առանձնահատկություն ևս. դրանց զգալի մասը ժողովրդի կողմից հատուկ վերաբերմունքի է արժանացել՝ կապվելով որոշակի ուղենիշերի կամ սրբերի հետ: Այսպես, Թռեղքը Ջավախքին միացնող լեռնանցքը (բարձրագույն կետը ծ. մ. 2180 մ) կոչվում է «Թիքքար / Թիքմաթաշ» այնտեղ կանգնած սահմանաքար-վիշապաքարի անունով: Վիշապաքարերը կոչվում են Ս. Սարգիս (Գանձա 1, Մերենիա 1, Վլադիմիրովկա 1), Ս. Գևորգ (Սաբիդախչո 2), դրանք գտնվում են եկեղեցի-մատուռի մեջ կամ մոտ (Ս. Հովհաննես՝ Փոկա 1, Ս. Աստվածածին՝ Սամշվիլդե 1, Ս. Կոնստանտին՝ Թեջիսի 1, հին մատուռներ՝ Խորենիա 1, Գումբատի 1)[13]:

Վիշապաքարերը որպես Լևոն Մելիքսեթ-Բեկի հետազոտության առարկա

Ջավախքի և Թռեղքի տարածքի վիշապաքարերից մի քանիսը (Գանձա 1, Մուրջախեթ 1–2, Զիկիանի 1, Թեթրիծղարո 1, Թեջիսի 1, Սամշվիլդե 1) բավականին վաղ հիշատակվում են Վ. Տեպցովի[14], Ե. Լալայանի[15], Ի. Ռոստոմովի[16] և Է. Թաղաիշվիլու[17] կողմից: Սակայն հիշյալ հեղինակներն այդ կոթողները չեն ներկայացնում որպես վիշապաքար. դրանք առաջին անգամ որպես այդպիսին սահմանել է Լ. Մելիքսեթ-Բեկը 1920-ական թվականներին իրականացված հետազոտությունների արդյունքում:

---

[11] *Մանրամասն տե՛ս* Բոբոխյան, *Ջիլիբերտ, Հնիլա. 2015, 269–396:*

[12] *Համապատասխան կոթողների ամբողջական ցանկը տե՛ս* Բոբոխյան. *2020, 103–109:*

[13] Բոբոխյան. *2021, 20–21:*

[14] Тепцов. 1890, 131.

[15] *Լալայան. 1892, 53* (=Меликсет-Беков. 1983, 399–400), Меликсет-Беков. 1931, 202–203.

[16] Ростомов. 1898, 53, 93; Ростомов. 1901, 31.

[17] Токайшвили. 1909, 28, рис. 13.

Վիշապաքարերի տարածման գոտում Մելիքսեթ-Բեկն աշխատում է որպես Մեսխեթ-Ջավախքի (1923 թ.) և Թռեղք-Ծալկայի (1924 թ.) հուշարձանների պահպանության հնագիտական արշավախմբերի ղեկավար, Մանգլիսիի ու Գոխնարիի (1923–1925 թթ.) շրջանները հետազոտող արշավախմբերի ղեկավար, Ջավախք-Թռեղքի գավառական հնագիտական արշավախմբի բաժանմունքի ղեկավար (1929 թ.): Ավելի ուշ նաև մասնակցում է Վերին և Ստորին Ծալկայի հնագիտական արշավախմբի աշխատանքներին (1933 թ.)[18]:

Սա նշանակում է, որ վիշապաքարերի վերաբերյալ նյութերը գիտականը հավաքել է 1923–1925 թթ., նաև՝ 1929, 1933 թթ.: Առանձին միավորներ հիշվում են ավելի ուշ (հմմտ. Կումուրդո 1, որ գտնվել է 1942 թ.): Մեգալիթների հետազոտությունը Մելիքսեթ-Բեկը սկսել է 1923 թ. Գոխնարիում[19]. նույն թվականին նա ուսումնասիրել է նաև Սամշվիլդեի հնությունները[20], որտեղ կարող էր հետազոտել տեղի վիշապաքարը: Գոխնարիի կամ Մանգլիսիի կիկլոպյան համալիրը, վիշապաքարով հանդերձ, հայտնաբերել է հենց Մելիքսեթ-Բեկը[21]:

1929 թ. կարևոր տարի է եղել Վրաստանի տարածքի վիշապաքարերի ուսումնասիրության համար, երբ Մելիքսեթ-Բեկն այցելել է Ավրանլոյի, Թիք քարի, Գանձայի («Փարվանա լճից Սաղամո լիճ ընկած ճանապարհի վիշապը») վիշապաքարերը, ազգագրագետ Գ. Զուրսինի հետ եղել Մուրջախեթում, ով հավաքագրում էր այդ շրջանի հայ բնակչության վերաբերյալ ազգագրական նյութեր[22]:

Այն որ 1929 թ., ինչպես նաև 1933 թ., կարևոր տարիներ են եղել Վրաստանի տարածքի վիշապաքարերի հետազոտության համար վկայում են երկու հարակից տվյալներ:

Այսպես, ըստ Ն. Մառի մի վկայության՝ Լ. Մելիքսեթ-Բեկը վիշապաքարեր է հետազոտել 1927 թ.: Մասնավորապես, 1930 թ. գարնանը Մառը Թիֆլիսում գտնվելիս լսում է Մելիքսեթ-Բեկի մանրամասն ելույթ-հաշվետվությունը վիշապաքարերի և վիշապանմանների հետազոտության մասին, որտեղ շեշտը դրվում էր, ըստ նրա, 1927 թ. ամռանը Փարվանայի շուրջ իրականացված աշխատանքների վրա[23]: Այս ելույթը եղել է 21. IV. 1930 թ.՝ «Հնագիտական հետազոտություններ Տրիալետի-Ծալկայում, Ջավախեթիում և Աբոցում. վիշապների և մեգալիթների խնդրի շուրջ (ԶԿՈՒ-ի 1929 թ. գավառական արշավախմբի արդյունքներից)» վերնագրով[24]: Այսինքն՝ խոսքը ոչ թե 1927 թ., ինչպես նշում է Մառը, այլ 1929 թ. իրականացված աշխատանքների մասին է:

---

[18] Меликсет-Беков. 1960, 12–14 *(այս մատենագրական աշխատանքում համապատասխան հրապարակումները Թռեղք-Ծալկայի գիտարշավների վերաբերյալ նշված են № 202, 208, 241, 280, 293-ով, իսկ մեգալիթների և կիկլոպյան ամրոցների վերաբերյալ՝ № 221, 314, 323, 427-ով):*

[19] Меликсет-Беков. 1938, 5.

[20] *Բայրամյան. 2016, 23:*

[21] Аноним. 1926, 15. *Այս մասին Վ. Գուրկո-Կրյաժինը չի հիշատակում* (Гурко-Кряжин. 1926а; Гурко-Кряжин. 1926б), *ինչի համար Մելիքսեթ-Բեկի կողմից արժանանում է քննադատության* (Меликсет-Беков. 1926)*:*

[22] Чурсин. 1929, 2.

[23] Марр, Смирнов. 1931, 10.

[24] Меликсет-Беков. 1938, 32.

Բացի այդ, հայ արձակագիր, հասարակական գործիչ Ատրպետի արխիվում պահպանվել է նույն՝ 1929 թ. (ինչպես նաև 1933 թ.) թվագրվող երկու բացիկ՝ ստացված Մելիքսեթ-Բեկից, որոնցից տեղեկանում ենք, թե նրանց միջև վիշապագիտական գրականության փոխանակություն է տեղի ունեցել[25]*:*

Նշենք նաև, որ 1924–1927 թթ. հայ-վրացական հնագիտական արշավախմբի կազմում Մելիքսեթ-Բեկը լինում է նաև Հայաստանում՝ Արագածոտնում, Գեղարքունիքում, Լոռիում և Տավուշում[26]*, որի ընթացքում, չի բացառվում, որ տեսած լինի նաև վիշապաքարեր: Մասնավորապես, 1924 թ.՝ վրացական արշավախմբի աշխատանքների առաջին տարում, ի թիվս այլոց, այցելություններ են կատարվում նաև Արագածի լանջերը, որտեղ Մելիքսեթ-Բեկը ուսումնասիրում է նաև կիկլոպյան կառույցներ. ի դեպ, արշավախմբի աշխատանքները հայկական կողմից համակարգել է Աշխարհբեկ Քալանթարը*[27]*:*

Վիշապաքարերի և, ընդհանրապես, մեգալիթների, դրանց հետ կապված տարատեսակ ավանդազրույցների (հսկաներ, Քյոռօղլի և այլն) մասին Մելիքսեթ-Բեկն ունեցել է մի շարք ելույթ-հաշվետվություններ[28]*: Բացի այդ, նա գրել է գրախոսականներ հնագետներ Ե. Բայբուրթյանի*[29] *և Գ. Աբիլովայի*[30] *թեկնածուական աշխատանքների մասին*[31]*:*

---

[25] *Բ ո բ ո խ յ ա ն. 2020, 22, նկ. 31–32: Ատրպետը ճանաչել է Մելիքսեթ-Բեկին ավելի վաղ՝ շփվելով նրա հետ Թիֆլիսի Հայոց ազգագրական ընկերությունում (Լ ա լ ա յ ա ն. 1983, 13): Մելիքսեթ-Բեկը, վիշապների մասին գրելիս, հիշատակում է Ատրպետին և նրա տվյալները Ձորոխի ավազանի կոթողների մասին* (М е л и к с е т-Б е к о в. 1938, 22, 31, 67, 76, 107; М е л и к с е т-Б е к о в. 1947a, 37)*: Բացի այդ, մոսկովյան «Իզվեստիա» թերթին կից լույս տեսնող «Կրասնայա նիվա» հանդեսում կովկասյան մեգալիթյան մշակույթի հայտնագործման մասին կարդում ենք մի տեղեկություն, որտեղ Ատրպետն ու Մելիքսեթ-Բեկը հիշվում են միասին. «Կիկլոպյան և մեգալիթյան կառույցների առաջին օրինակները Կովկասում հայտնաբերվել են Հայաստանում գրող Ատրպետի և ճարտարապետ Թորոս Թորամանյանի կողմից: Վերջին ժամանակներս նման կառույցներ են հայտնաբերվել Հայաստանում Աշխարհբեկ Քալանթարի և Տեր-Հակոբյանի կողմից: Այսպիսի կառույցներ են ի հայտ եկել նաև Վրաստանի սահմաններում՝ միանգամից մի քանի վայրերում: Դրանք բացահայտվել են Թիֆլիսի Պետհամալսարանի դոցենտ և ՍՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Կովկասյան պատմա-հնագիտական ինստիտուտի քարտուղար Լ. Մ. Մելիքսեթ-Բեկի կողմից»* (А н о н и м. 1926, 15)*:*

[26] Г а р и б д ж а н я н. 2013, 65; *հմմտ. Մ ե լ ի ք ս ե թ-Բ ե կ. 2010, 451, Բ ա յ բ ա մ յ ա ն. 2016, 22–23:*

[27] Ч у б и н а ш в и л и. 1924, 3.

[28] М е л и к с е т-Б е к о в. 1938, 32–33. *Ն. Մառը նշում է, որ վիշապաքարերի 1909–1912 թթ. հետազոտությանը նվիրված իր գիրքը շարադրել է Թռեղք-Ջավախքյան վիշապաքարերի մասին 1930 թ. Թիֆլիսում Մելիքսեթ-Բեկի ներկայացրած ելույթը լսելուց հետո* (М а р р, С м и р н о в. 1931, 10)*:*

[29] Б а й б у р т я н. 2011.

[30] А б и л о в а. 1953.

[31] М е л и к с е т-Б е к о в. 1960, 82.

Աղյուսակ

Լ. Մելիքսեթ-Բեկի կողմից հետազոտված Ջավախքի (1–6) և Թռեղքի (7–17) վիշապաքարերը

№	Անվանումը	Տեղադրությունը	Պատկերը	Աղբյուրը
1.	Գանձա 1 (Ս. Սարգիս, Կաթքար/ Կաթնաքար)	Գանձա գյուղի մոտ, դաշտում	ձկնացլակերպ	Меликсет-Беков. 1938, 103–104, таб. XLIV–XLVI; Меликсет-Беков. 1947a, 31, 34, рис. 10–11.
2.	Կումուրդո 1	Արեշ(տ) հին բնակավայրում, այժմ՝ Կումուրդո գյուղում	ցլակերպության տարրերով	Меликсет-Беков. 1943, 163.
3.	Մուրջախեթ 1 (Կաթ-քար /Ծիծ-քար, Ջուձուս-քվա, կրճատ՝ Ջուկվա, Մարինե)	Մուրջախեթ գյուղի հին գերեզմանոցում	ցլակերպ	Меликсет-Беков. 1925a, 261; Меликсет-Беков. 1938, 98–103, таб. XLVII–XLVIII; Меликсет-Беков. 1947a, 30–31, рис. 6–8.
4.	Մուրջախեթ 2 (Կծկված Լալիա = Մոկա-կուլի Լալիա)	Հին Մուրջախեթի տարածքում, ներ-կայիս գյուղի հարավային ծայրամասում	ցլակերպության տարրերով	Меликсет-Беков. 1938, 98–99, таб. XLIX; Меликсет-Беков. 1947a, 33–34, рис. 9.
5.	Զիկիանի 1 (Թիքքար, Ցիցքար, Թիքմաթաշ, Թյուլուդաղ)	Բոգդանովկայից Ծալկա տանող խճուղու աջ կողմում, Փարվա-նա լճից 2–3 կմ հյուսիս-արևելք	ցլակերպ	Меликсет-Беков. 1938, 89, таб. XL; Меликсет-Беков. 1947a, 29, рис. 4.
6.	Ռադիո-նովկա 1	Ռադիոնովկա (Փար-վանա) գյուղի մոտ, լեռան լանջին, Փար-վանա լճից արևելք, Ստորին Ծալկայի ճանապարհին	ցլակերպության տարրերով	Меликсет-Беков. 1938, 110, таб. LVI; Меликсет-Беков. 1943, 161–162; Меликсет-Беков. 1947a, 37, рис. 15.
7.	Ավրանլո 1 (Թիքիլ-թաշ)	Ավրանլո և Կըզըլքիլիսա գյուղերի միջև	ցլակերպ	Меликсет-Беков. 1925a, 266–271; Меликсет-Беков. 1938, таб. LI; Меликсет-Беков. 1947, 31, 36, рис. 14.
8.	Բուրնաշեթ 2	Բուրնաշեթ գյուղի տարածքում	ցլակերպության տարրերով	Меликсет-Беков. 1938, таб. XXXVII.

9.	Գումբատի 1	Գումբատի գյուղի հունական եկեղեցու տարածքում	ձկնակերպության տարրերով	Меликсет-Беков. 1938, 33–35, 105, таб. L; Меликсет-Беков. 1947a, 31, 36, рис. 13.
10.	Թեթրիծղարո 1 (Արբած կուրգան, Ակբուլաղ-Բելիյ կյուչ)	Թեթրիծղարո քաղաքի մոտ	ցլակերպ	Меликсет-Беков. 1947a, 32.
11.	Թեջիսի 1	Թեջիսի/ Զոլակ գյուղից արևմուտք գտնվող Ս. Կոնստանտինի հունական եկեղեցու մեջ	ցլակերպ	Меликсет-Беков. 1938, 91–92, таб. LII–LIII; Меликсет-Беков. 1947a, 31.
12.	Ծալկա 2 (Թիքմաթաչ, Թեքելի դաշ)	Ծալկայի ջրամբարի տարածքում, Սանոմեր և Շիպյակ գյուղերի միջև	ձկնակերպ	Меликсет-Беков 1935; Меликсет-Беков 1938, 87, 104–105, таб. XLI–XLIII; Меликсет-Беков. 1943, 163; Меликсет-Беков. 1947a, 36, рис. 12.
13.	Մանգլիսի 1 (Քարե հարս)	Գոխնարի գյուղի մոտ գտնվող Լակվա (Դեղին) սարի վրա, հին Մանգլիսիի դիմաց	ձկնակերպության տարրերով	Меликсет-Беков. 1926; Меликсет-Беков. 1938, 112–113, таб. LVII; Меликсет-Беков. 1943, 161; Меликсет-Беков. 1947a, 31.
14.	Ռեխա 1	Ռեխա գյուղի Ս. Պողոս եկեղեցու բակում	ցլակերպ	Меликсет-Беков. 1938, 59, 71.
15.	Սաբիդախչո 1 (Թալին քար)	Սաբիդախչո գյուղում, այժմ՝ Կըզըլքիլիսայի / Կարմրավանքի ամառանոց	ցլակերպության տարրերով	Меликсет-Беков. 1938, 57, 89, таб. XXXIX; Меликсет-Беков. 1947a, 29, рис. 5.
16.	Սաբիդախչո 2 (Ս. Գևորգ)	Սաբիդախչո գյուղում, այժմ՝ Կըզըլքիլիսա / Կարմրավանքի ամառանոց	ցլակերպ	Меликсет-Беков. 1938, 89, таб. XXXVIII.
17.	Սամշվիլդե 1	Սամշվիլդե գյուղի Ս. Աստվածածնի վերափոխման հայկական եկեղեցու մեջ	ցլակերպ	Меликсет-Беков. 1938, 89–91, таб. LIV.

Լևոն Մելիքսեթ-Բեկի վիշապաքարերի հետազոտությունների գիտական արժեքը

Իր հետազոտությունների հիմնական արդյունքները Մելիքսեթ-Բեկը ամփոփել է «Մեգալիթյան մշակույթը Վրաստանում» վրացերենով շարադրված

գրքում (1938 թ.), «Մեգալիթյան մշակույթը Վրաստանում և նրա վերապրուկները Ռուսթավելու դարաշրջանում» ռուսերեն հոդվածում (1943 թ.) և մի շարք այլ հրապարակումներում, աշատանքներ, որոնք բարձր են գնահատվում մասնագիտական շրջանակներում[32]*: Այդ աշխատանքներում Մելիքսեթ-Բեկը քննարկում է 17 միավոր վիշապաքար՝ ցլակերպ (13 օրինակ), ձկնակերպ (3 օրինակ) և ձկնացլակերպ (1 օրինակ) (տե՛ս աղյուսակը): Դրանցից մինչ իրեն հայտնի են եղել 7-ը (Գանձա 1, Մուրջախեթ 1–2, Զիկիանի 1, Թեթրիծդարո 1, Թեջիսի 1, Սամշվիլդե 1), իր կողմից հայտնաբերվել են 10-ը (Ծալկա 2, Կումուրդո 1, Ռադիոնովկա 1, Ավրանլո 1, Բուրնաշեթ 2, Գումբաթի 1, Մանգլիսի 1, Ռեխա 1, Սաբիդախչո 1–2): Սակայն արդեն հայտնի կոթողները երբեք չեն քննարկվել որպես վիշապաքար, ինչն առաջինն արել է Մելիքսեթ-Բեկը:*

Մեգալիթյան մշակույթի և վիշապաքարերի համատեքստում Մելիքսեթ-Բեկը քննարկում է մի քանի խնդիրներ, որոնցում էական նորություններ է ասում: Դրանցից ամենակարևորը մեգալիթյան մշակույթի սահմանման հարցն է: Մեգալիթներն ընկալվում են որպես կոթողային արվեստի այն միակ օրինակները, որոնց մեջ պետք է փնտրել կովկասյան և, մասնավորապես, հայկական մոնումենտալիզմի ակունքները[33]*: Վիշապաքարերի համատեքստում կովկասյան մեգալիթյան հուշարձանների նախնական տիպաբանություն է արել Ա. Քալանթարը, իսկ ավելի մանրամասն՝ Մելիքսեթ-Բեկը: Վերջինս մեգալիթյան մշակույթը դասակարգում է որպես «բազիսային» և «վերնաշենքային»: Առաջինի թվին են պատկանում կառույցները (ամրոցներ, բնակելի շենքեր, աշտարակներ), երկրորդի մեջ՝ պաշտամունքային օբյեկտները, մասնավորապես՝ կանգուն քարերը, որոնք թյուրքախոսները կոչում են թիքմա-թաշ, թիքիլ-թաշ, իսկ հայերը՝ թիք-քար (վիշապ, մենհիր, բաբա): Վերջինները էվոլյուցիոն զարգացում են ապրել՝ նախատոտեմական շրջանից դեպի կենդանակերպություն և մարդակերպություն՝ հետագայում վերածվելով քրիստոնեական խաչակիր քարերի: Վաղ շրջանում դրանք մենհիրներ են, որոնց վրա մետաղի մշակման ոչ մի հետք չկա (Սամշվիլդե, Բուրնաշեթ, Սաբիդախչոյի երկու օրինակները, Թյուլուդաղ): Հետագայում այդ կոթողներն աստվածություն-տոտեմներ են՝ հսկա ձկների տեսքով (Գանձա, Շիպյակ-Սանոմեր, Մուրջախեթ, Գումբաթի), որոնք կրում են իրենց առնչվող զոհաբերության կենդանիների խորհրդանշաններ՝ զույգ կռունկ / արագիլ (Մուրջախեթ, Գանձա), շան գլուխ (Մուրջախեթ), երկգլխանի օձ (Մուրջախեթ), իրար գալարվող օձեր (Գումբաթի): Ավելի ուշ դրանց ավելացվում են աստղալ պաշտամունքին առնչվող բաղադրիչներ (պտղաբերության հետ կապված արևային սկավառակ՝ Գանձա, Ռադիոնովկա, Գոխնարի), ալիքաձև գծեր (Շիպյակ-Սանոմեր), ձկան գլուխ (Գանձա), ձկան աչք (Շիպյակ-Սանոմեր, Գանձա): Հետագա՝ մարդակերպացման փուլում դրանք մարմնավորում են մարդուն՝ դառնալով կրապաշտության առարկա (Ավրանլո-Կրգրլքիլիսա). հուշարձանի այս տեսակը Վրաստանում հայտնի է որպես «կվա-կացա» (Վախթանգ VI-ի «Դասթուրլամալի»-ում), «կալ-կվա», «կվատա-ռդզալի» (բանահյուսության մեջ՝ համա-*

[32] *Ղ ա ր ի բ յ ա ն. 1963, 337, Մ ո ւ ր ա դ յ ա ն. 1963, 104, Մ ո ւ ր ա դ յ ա ն. 1966, 59, Մ ո ւ ր ա դ յ ա ն. 1990, 67, Մ ե լ ի ք ս ե թ-Բ ե կ. 2010, 17, Բ ա յ ր ա մ յ ա ն. 2016, 13:*

[33] *Պ ա պ ո ւ խ յ ա ն. 2005, 70–72,* Амиранишвили. 1950, 23; Косвен. 1957, 164.

պատասխանելով Ուվրաինայի քարե բաբաներին կամ Միջին Ասիայի բալ-բալներին[34]:

Մելիքսեթ-Բեկը քննարկում է նաև «վիշապոիդ» հասկացությունը: Առաջին անգամ այդ կատեգորիան առանձնացրել է Ի. Մեշչանինովը՝ դրան պատկանող միավորները ընորոշելով որպես «վերապրուկային վիշապներ», որոնք, սակայն, ընդհանուր հատկանիշներով պատկանում են վիշապաքարերի խմբին. դրանց թվում նա հիշատակում է Հայկական լեռնաշխարհից դուրս հայտնաբերված օրինակները[35]: *Վիշապանմանների գաղափարը զարգացնում է Մելիքսեթ-Բեկը՝ Փարվանա լճի շրջակայքի նյութերի հիման վրա*[36]: *Վերջինիս համար դրանք ձկան ձև չունեն, բայց կապվում են ձկան կամ այլ կենդանիների (արագիլ, շուն, երկգլխանի օձ) պաշտամունքի հետ*[37]:

Մելիքսեթ-Բեկն անդրադառնում է նաև վիշապաքարերի ժամանակագրության խնդրին: Մասնավորապես, հստակ չթվագրելով վիշապաքարերը՝ առաջարկում է էվոլյուցիոն մոտեցում՝ մենհիր – կենդանակերպ կոթող – մարդակերպացում – խաչքարացում զարգացման ճանապարհով[38]: *Մի դեպքում նա ընդգծում է Ն. Մառի կողմից վիշապաքարերի սկիզբը Ք. ա. V հազ. թվագրելը և, կարծես, համաձայնում դրա հետ*[39]: *Բերում է նաև Ի. Շիլակաձեի կարծիքն այն մասին, որ մենհիր-վիշապները «նախադասակարգային բարձր մշակույթ»-ի արգասիք են*[40]: *Վիշապաքարերը թվագրելու նպատակով՝ Լ. Մելիքսեթ-Բեկը համեմատում է դրանց երկաթեղարյան բրոնզե գոտիների պատկերագրության հետ*[41]:

Ուշագրավ է, այսպես կոչված, «բոլորակ փոսիկների» հարցը: Մասնավորապես մի շարք վիշապաքարերի կողային, առջևի ու ետևի հատվածներում (Գանձա 1, Թեթրիծդարո 1, Թիքքար 1) օրինաչափորեն ի հայտ են գալիս կլորավուն փոսիկներ[42]: *Վիշապաքարերի համատեքստում դրանք առաջինը նկատել է Լ. Մելիքսեթ-Բեկը՝ սխալմամբ մեկնաբանելով որպես նոր շրջանում «փամփուշտներ դիպչելու արդյունք»*[43], *մինչդեռ այլ հեղինակներ այն համարում են վաղ նվիրական գործողությունների արդյունք*[44]:

Հասկանալու համար մեգալիթյան ֆենոմենը՝ Մելիքսեթ-Բեկն հիշյալ իր աշխատանքներում քննարկում է նաև ազգագրական տվյալներ: Մասնավորապես, Թռեղք-Ջավախքի վիշապաքարերի օրինակով նա կովկասյան մեգալիթյան հուշարձանները և դրանց՝ հսկաներին վերագրվող անվանումներն ու պատկերացումները (հայ.՝ «վիշապ», վրաց.՝ «գվելաշապ», հայ-վրաց.՝ «քաջք»,

---

[34] Меликсет-Беков. 1938, 129–133; Меликсет-Беков. 1943, 152; *հմմտ.* Амиранишвили. 1950, 22.

[35] Мещанинов. 1925, 405.

[36] Марр, Смирнов. 1931, 10; *հմմտ.* Миханкова. 1931, 48; Миханкова. 1949, 182; Меликсет-Беков. 1947а.

[37] Меликсет-Беков. 1938, 131.

[38] Меликсет-Беков. 1938, 129–133; Меликсет-Беков. 1943, 152.

[39] Меликсет-Беков. 1943, 153.

[40] Меликсет-Беков. 1960, 9.

[41] Меликсет-Беков. 1933, 103; Меликсет-Беков. 1947а, 31.

[42] *Սանոյան. 1989, 102, 2001, 174,* Talakhadze. 2000, 147–148.

[43] *Հմմտ. Սանոյան. 1989, 102:*

[44] *Թորամանյան. 1948, 229, Խանզադյան. 1969, 157:*

«դեվ», հայ.՝ «հսկա», վրաց-օս.՝ «գմիր /գումիր», օս.՝ «ուոյգուտա») դիտարկում է ընդհանուր համատեքստում՝ ելնելով դրանց արտաքին հատկանիշներից (չափերով մեծ/հսկայական լինելուց)[45]: Այս մասին է նաև Մելիքսեթ-Բեկի «Բյուռղլին Վրաստանի և Հայաստանի նյութական մշակույթի հուշարձաններում» անտիպ ելույթ /ուսումնասիրությունը[46]: Վիշապաքարերի հետ կապված Վարդավառի տոնը մեկնելիս՝ նա նմանապես զուգահեռներ է փնտրում հունա-վրացական ազգագրական միջավայրում[47]:

Եզրակացություն

Մելիքսեթ-Բեկը հատուկ հետաքրքրություն է ունեցել հնագիտության նկատմամբ դեռևս համալսարանական տարիներին՝ ուսումից հետո լինելով հնագիտական մի շարք ընկերությունների անդամ և զբաղեցնելով ղեկավար պաշտոններ:

Հնագիտական ակտիվ գործունեությամբ Մելիքսեթ-Բեկը զբաղվել է Վրաստանի տարբեր հատվածներում 1923–1930 թթ.՝ ուսումնասիրելով միջնադարյան հուշարձաններ: Սակայն որպես հնագետ գիտնականը հանդես է գալիս ոչ թե միջնադարյան, այլ նախապատմական հնագիտության բնագավառում. մասնավորապես, հեղինակի հետազոտության թիրախ են դառնում մեգալիթյան հուշարձանները:

Այդ հուշարձանների թվում կարևոր դեր էր վերապահված Ջավախքում և Թռեղքում գտնվող վիշապաքարերին: Մելիքսեթ-Բեկն իր աշխատանքներում քննարկում է 17 միավոր վիշապաքար, որոնցից 10-ը հայտնաբերել է ինքն, իսկ մնացածը, որպես վիշապաքար, առաջին անգամ քննարկվել են կրկին իր կողմից: Մելիքսեթ-Բեկը դիտարկում և սահմանում է այդ հուշարձանները մեգալիթյան մշակույթի համատեքստում, անդրադառնում դրանց թվագրության և պատմական նշանակության խնդրին: Նա վիշապաքարերը (և այլ հուշարձաններ) հետազոտել է առավելապես հետախուզական աշխատանքների միջոցով. եղել է մեկ դեպք (Ծալկա 2), երբ իրականացվել են մասնակի պեղումներ, ավելի շուտ մաքրողական աշխատանքներ՝ կոթողի ստորին երկարությունը պարզելու նպատակով:

Վիշապաքարերի մեկնության խնդրում, և ոչ միայն, Մելիքսեթ-Բեկը Նիկողայոս Մառի դպրոցի ներկայացուցիչ էր, թեև Մառի դասախոսություններն անձամբ չէր լսել: Նա հնագիտական տվյալները համադրում էր պատմական[48] և ազգագրական[49] տեղեկություններին՝ նյութական մշակույթի պատմությունը վերակազմելու համար:

Վիշապաքարերի հետազոտությունը Վրաստանում իրականացավ նույն ժամանակահատվածում, ինչ Հայաստանում՝ 1923–1929 թթ.: Ընդ որում, եթե Հայաստանում, վիշապաքարերի և մեգալիթյան կառույցների ուսումնասի-

[45] Меликсет-Беков. 1925, 261–271; Меликсет-Беков. 1938, 46–47, 134. *Արագածի շրջակայքում ևս վիշապաքարերն առնչում են «օղուզ/հսկա/աղնավուրների գերեզմաններ»-ին (տե՛ս* Марр, Смирнов. 1931, 64; Пиотровский. 1939, 13; *Աբեղյան. 1941, 70):*

[46] Меликсет-Беков. 1938, 33.

[47] *Մելիքսեթ-Բեկ. 2010, 256–264:*

[48] *Մուրադյան. 1966, 57:*

[49] Меликсет-Беков. 1925a.

րության առաջամարտիկը Ա. Քալանթարն էր, ապա Վրաստանում՝ Մելիք-սեթ-Բեկը:

Վիշապաքարերը Մելիքսեթ-Բեկի համար ունեին մեկ այլ նշանակություն և. որպես Հայկական լեռնաշխարհի «էնդեմիկ» հուշարձան՝ այդ կոթողները հեղինակի համար ենթագիտակցական կապ էին ապահովում իր նախնիների երկրի և մշակույթի հետ:

Արսեն Բոբոխյան – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն: Գիտական հետաքրքրությունները՝ հնագույն Հայաստանի նյութական ու հոգևոր մշակույթի խնդիրներ: Հեղինակ է 3 մենագրության և 100-ից ավելի հոդվածի: ORCID:0000-0002-2277-8281. arsen.bobokhyan@sci.am

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբեղյան Մ. 1941, «Վիշապներ» կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ, Երևան, «Արմֆան», 98 էջ:

Բայրամյան Հր. Ս. 2013, Պրոֆ. Լևոն Մելիքսեթ-Բեկ (կենսագործունեության համառոտ ակնարկ), Սիմոնյան Ա. (խմբ.). – Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, գրքի վերահրատ., Երևան, ԵՊՀ հրատ., III–X:

Բայրամյան Հր. 2016, Նախաբան՝ Մելիքսեթ-Բեկ Լ. «Վարդապետք Հայոց հյուսիսային կողմանց» և նրանց ինքնությունը, թարգմանությունը և նախաբանը՝ Հ. Բայրամյանի, Ս. էջմիածին, Մայր Աթոռ Ս. էջմիածին, 287 էջ:

Բոբոխյան Ա. 2020, Ատրպետի «գիտական արկածները» և վիշապ քարակոթողների հայտնագործումը, Երևան, «Հայաստանի պատմության թանգարան», 151 էջ:

Բոբոխյան Ա. 2021, Կաթքար-վիշապաքար. Երվանդ Լալայանից հարյուր տարի անց. – Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ, № 4, Երևան, ՀԱԻ հրատ., էջ 20–35:

Բոբոխյան Ա., Ձիլիբերտ Ա., Հնիլա Պ. 2015, Վիշապաքարերի հնագիտություն, Պետրոսյան Ա., Բոբոխյան Ա. (խմբ.). – Վիշապ քարակոթողները, Երևան, «Գիտություն» հրատ., էջ 269–396:

Թորամանյան Թ. 1948, Հայկական ճարտարապետություն, հ. 2, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 307 էջ:

Լալայեանց Ե. 1892, Ձաւախքի բուրմունք, Թիֆլիս, «Արօր», 71 էջ:

Լալայան Ե. 1931, Դամբանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, Երևան, Մելքոնյան ֆոնդ, 239 էջ:

Լալայան Ե. 1983, Երկեր, հ. 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 456 էջ:

Խանզադյան Է. 1969, Գառնի IV պրակ.– Հնագիտական պեղումները Հայաստանում, հ. 12, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 239 էջ:

Ղարիբյան Ա. 1963, Լեոն Մելիքսեթի Մելիքսեթ-Բեկ. – ՊԲՀ, № 3, էջ 336–337:

Մելիքսեթ-Բեկ Լ. 1916, Վէմքար.– «Հովիտ» (Թիֆլիս), № 3, էջ 43–44:

Մելիքսեթ-Բեկ Լ. 1934, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, Երևան, Մելքոնյան ֆոնդ, 268 էջ:

Մելիքսեթ-Բեկ Լ. 1957, Հնագիտական ուղևորություն. – «Սովետական Վրաստան» (Թիֆլիս), № 3, էջ 3:

Մելիքսեթ-Բեկ Լ. 2010, Պատմաբանասիրական պրպտումներ, Աշխատասիրությամբ՝ Պ. Մուրադյանի, Ս. էջմիածին, Մայր Աթոռ Ս. էջմիածին, 496 էջ:

Մուրադյան Պ. 1963, Լևոն Մելիքսեթ-Բեկ, ՀՍՍՌ ԳԱ տեղեկագիր. Հասարակական գիտություններ (Երևան), № 11, էջ 102–104:

Մուրադյան Պ. 1966, Պրոֆ. Լևոն Մելիքսեթ-Բեկ, էջմիածին (Վաղարշապատ), № 4, էջ 55–60:

Մուրադյան Պ. 1990, Լևոն Մելիքսեթ-Բեկ (ծննդյան 100-ամյակի առթիվ). – ՊԲՀ, № 3, էջ 63–69:

Նահապետյան Ռ. 2020, Ազգաբանական ուսումնասիրություններ, գ. 2, Երևան, ԵՊՀ հրատ., 402 էջ:

Պապուխյան Ն. 2005, Թորոս Թորամանյան. կյանքն ու գործը, Երևան, «Լուսակն», 108 էջ:

Սանոսյան Ա. 1989, Ձավախքի «վիշապ» քարակոթողները. – «Բանբեր Երևանի համալսարանի», № 2, էջ 97–102:

Սանոսյան Ա. 2001, ...Նաեւ սպիտակ եղեռն. հոդվածների ժողովածու, Երևան, Հեղինակային հրատ., 208 էջ:

Абилова Г. А. 1953, Мегалитические памятники Закавказья. – Автореферат диссеартации кандидата исторических наук, Баку, Государственный университет им. С. М. Кирова, 30 с.

Амиранишвили Ш. Я. 1950, История грузинского искусства, т. 1, Москва, «Искусство», 526 с.

Аноним (А. С.) 1926, Памятники циклопических построек в Грузии, «Красная нива» (Москва), № 47, с. 15.

Байбуртян Е. А. 2011, Последовательность развития древнейших культур Армении на основе археологического материала, Ереван, Музей Истории Армении, 112 с.

Гарибджанян С. 2013, Научная интеллигенция Армении (1920 – середина 1930-х гг.), Ереван, «Лусакн», 189 с.

Гурко-Кряжин В.А. 1926 а, Циклопические сооружения Закавказья. – «Новый Восток» (Москва), № 15, с. 212–221.

Гурко-Кряжин В. А. 1926 б, Город циклопов, Заря Востока (Тбилиси), № 1271, с. 3.

Дзаттиаты Р. Г. 2019, По поводу одной публикации в «Российской археологии». – «Вестник Владикавказского научного центра», № 19/3, с. 33–36.

Косвен М. О. 1957, Очерки истории первобытной культуры, Москва, АН СССР, 240 с.

Марр Н. Я., Смирнов Я. И. 1931, Вишапы, Ленинград, «Огиз», 108 с.

Меликсет-Беков Л. М. 1925а, К археологии и этнологии Туальской Осии. – Труды Закавказской научной ассоциации, Материалы по изучению Грузии: Юго-Осетия, Серия 1, Выпуск 1, Тифлис, «Закавказская научная ассоциация», с. 252–279.

Меликсет-Беков Л. М. 1925 б, В поисках следов доисторической культуры, «Заря Востока» (Тбилиси), № 939, с. 4.

Меликсет-Беков Л. М. 1926, Письма в редакцию, «Заря Востока» (Тбилиси), № 1270, с. 4.

Меликсет-Беков Л. М. 1935, Тикма-таш, газета «Исследование Храмгеса [Гидроэлектростанции Храми = Цалкинское водохранилище]», «Розенберги» (Тбилиси), № 33, с. 5–6 (на груз. яз.).

Меликсет-Беков Л. М. 1938, Мегалитическая культура Грузии, Тбилиси, «Федерация», 140 с. (на груз. яз.).

Меликсет-Беков Л.М. 1943, Мегалитическая культура в Грузии и ее пережитки в эпоху Руставели. – Труды Тбилисского учительского университета имени А. С. Пушкина, № III (Тбилиси), с. 149–164.

Меликсет-Беков Л. М. 1947 а, Вишапы и вишапоиды Грузии. – Краткие сообщения института истории материальной культуры (Москва), № 15, с. 27–37.

Меликсет-Беков Л. М. 1947 б, Из истории археологических изысканий в Армении. – «Известия АН АрмССР: общественные науки», № 6, с. 45–50.

Меликсет-Беков Л. М. 1960, Полная библиография печатных работ, сост. Шилакадзе И. И., Тбилиси, Тбилиский университет, 89 с.

Меликсет-Беков Л. 1987, Архив Л. М. Меликсет-Бека. – «Вестник общественных наук» Арм.ССР, № 3, с. 92–93.

Мещанинов И. 1925, Каменные статуи рыб-вишапы на Кавказе и в северной Монголии. – Записки коллегии востоковедов при Азиатском музее Российской академии наук (Ленинград), № 1, с. 401–409.

Миханкова В. А. 1931, Вишапы. – «Ежемесячный журнал государственной академии истории материальной культуры» (Ленинград), № 9/10, с. 47–52.

Миханкова В. А. 1949, Николай Яковлевич Марр: очерк его жизни и научной деятельности, Москва-Ленинград, АН СССР, 555 с.

Пиотровский Б. Б. 1939, Вишапы: каменные статуи в горах Армении, Ленинград, Армянский филиал АН СССР, 40 с.

Ростомов И. П. 1898, Ахалкалакский уезд в археологическом отношении. – Сборник материалов по описанию местностей и племён Кавказа, т. XXV, Тифлис, Издание Управления кавказского учебного округа, 136 с.

Ростомов И. П. 1901, Столбы Мурджахети и Гандза. – «Могазури» (Тифлис), № 1, с. 31–33 (на груз. яз.).

Тепцов В. 1890, Агбулахские легенды. – Сборник материалов для описания местностей и племён Кавказа (Тифлис), № IX, с. 131–136.

Токайшвили Е. 1909, Христианские памятники / Экскурсия Е. Токайшвили в 1902 г. – Материалы по археологии Кавказа, № XII (Москва), с. 1–164.

Чубинашвили Г. 1924, Из поездки по Армении. – «Заря Востока» (Тбилиси), № 611, с. 3.

Чурсин Г. Ф. 1929, Краеведческая экспедиция ЗКУ (письмо из Ахалкалаки). – «Заря Востока» (Тбилиси), № 180, с. 2.

Talakhadze E. 2000, Big Catalogue of Georgia Petroglyphs, Tbilisi, Tamarioni, 55 p. (in Georgian and English).

ЛЕВОН МЕЛИКСЕТ-БЕК – ИССЛЕДОВАТЕЛЬ КАМЕННЫХ ВИШАПОВ

АРСЕН БОБОХЯН

Р е з ю м е

Ключевые слова: Левон Меликсет-Бек, археология, Джавахети,Триалети, мегалитическая культура, каменные вишапы, исследования 1920-ых гг.

Кавказовед Левон Меликсет-Бек (1890–1963) известен научному миру как медиавист-источниковед. Как археолог он занимался изучением мегалитических памятников, в частности – каменных вишапов.

Л. Мелликсет-Бек проявлял особый интерес к археологии еще во время учебы в Одесском университете. После учебы он был членом нескольких археологических обществ, занимая руководящие должности.

В 1923–1930 гг. Меликсет-Бек вел активную археологическую деятельность в разных частях Грузии (Кахети, Кавтури, Южная Осетия, Триалети, Джавахети), изучая средневековые памятники. Однако реальной археологией Меликсет-Бек занимается не в области средневековой, а доисторической археологии: в частности, объектом исследования автора являются мегалитические памятники частично в Осетии, но преимущественно в Джавахети и Триалети.

Каменные вишапы играли важную роль среди этих памятников. Меликсет-Бек исследовал 17 единиц вишапов, 10 из которых были обнаружены автором, а остальные, как таковые, также были определены им. Меликсет-Бек рассматривает эти памятники в контексте мегалитической культуры, затрагивает вопросы их датировки и исторического значения.

В вопросе интерпретации вишапов, и не только, Меликсет-бек был представителем школы Николая Марра, хотя лично лекций Марра не слушал. Он сопоставлял археологические данные с историко-этнографическими сведениями и делал реконструкции, воссоздающие историю материальной культуры.

Каменные вишапы имели для Меликсет-бека также и другое значение: как «эндемичные» памятники Армянского нагорья, они обеспечивали автору подсознательную связь с землей и культурой своих предков.

Арсен Бобохян – к. и. н., директор Института археологии и этнографии НАН РА. Научные интересы: проблемы материальной и духовной культуры древней Армении. Автор 3 монографий и более 100 статей. ORCID:0000-0002-2277-8281. arsen.bobokhyan@sci.am

LEVON MELIKSET-BEK – RESEARCHER OF DRAGON STONES

ARSEN BOBOKHYAN

S u m m a r y

Keywords: Levon Melikset-Bek, archaeology, Javakheti, Trialeti, megalithic culture, dragon stones, researches of 1920s.

Levon Melikset-Bek, a specialist in Caucasian Studies, is known to the scientific community as a medievalist and expert in Source studies. As an archaeologist, he studied megalithic monuments, in particular dragon stones.

L. Melikset-Bek showed a special interest in archaeology during his studies at Odessa University. After his studies, he was a member of several archaeological societies holding senior positions.

In 1923–1930, Melikset-Bek carried out energetic archaeological activity in different parts of Georgia (Kakheti, Kavturi, South Ossetia, Trialeti, Javakheti) studying medieval monuments. However, Melikset-Bek is engaged in real archaeology not in the field of medieval, but prehistoric archaeology: in particular, the author's object of research is megalithic monuments partly in Ossetia, but mainly in Javakheti and Trialeti.

Dragon stones played an important role among these monuments. Melikset-Bek examined 17 units of dragon stones, 10 of which were discovered by the author, and the rest, as such, were also identified by him. Melikset-Bek considers these monuments in the context of megalithic culture, touches on the issue of their dating and historical significance.

In the matter of interpretation of the significance of dragon stones, and not only, Melikset-Bek was a representative of the Nikolay Marr school, although he did not personally listen to Marr's lectures. He compared archaeological data with historical and ethnographic information and made reconstructions recreating the history of material culture.

The dragon stones also had another meaning for Melikset-Bek: as "endemic" monuments typical of the Armenian Highlands, they provided the author with a subconscious connection with the land and culture of his ancestors.

Arsen Bobokhian – Candidate of Historical Sciences, Director of the Institute of Archaeology and Ethnography of NAS RA. Scientific interests: problems of material and spiritual culture of ancient Armenia. Author of 3 monographs and more than 100 articles. ORCID:0000-0002-2277-8281. arsen.bobokhyan@sci.am